ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

04 հոկտեմբեր, 2024 թվականի № 64-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 136-Ա որոշմամբ, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի հոկտեմբերի 1-ի N-ՀՄ-02/677/24 գրությունը, «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի N 26/24 գրությունը և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի N_Ռ/24 01-88 գրությունը և հաշվի առնելով գործող իրավակարգավորումները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի հոկտեմբերի հոկտեմբերի 1-ի N-ՀՄ-02/677/24 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2024 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

2. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի հոկտեմբերի հոկտեմբերի 2-ի N 26/24 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2024 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում

տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

3. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի N_Ռ/24 01-88 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2024 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

04 հոկտեմբեր, 2024 թվականի

ք. Երևան